ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1 1956 Общественные науки

Ռ. Աբրահամյան

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՄԻ ԱՆՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Հրատարակության հանձնվող մինչև այժմ անհայտ բանաստեղծությունը Նաղաշ Հովնաթանի մեզ հասած գեղեցիկ ստեղծագործություններից մեկն է։ Նա հայ գրականությանը հայտնի չէ ոչ տպագիր և ոչ էլ ձեռագիր վիճակում։ Այս տաղը պահվում է հայագիտությանը հայտնի մի ձեռագրում, որը ժամանակին պատկանելիս է եղել կոստանդնուպոլսեցի Հովհաննես քահանա Մկրյանին։ 1899 թվականին այս ձեռագրում պահպանվող Նաղաշ Հովնաթանի երկու տաղը, ձեռագրի նկարագրության հետ միասին, հրատարակվել է «Լումա»-ի 1899 թվականի Ա. գրքում՝ «Ժողովրդական բանաստեղծություններ» վերնագրի տակ[1]։ Հետագայում այս ձեռագիրը իր վրա գրավեց բանասերների ուշադրությունը, բայց Մկրյանի մահից հետո հետաքրքրվողների համար անհայտ մնաց ձեռագրի բախտը։

Այս տարի բարեպատեհ առիթով հնարավորություն ունեցանք ծանոթանալու Անթիլիասի հայոց մատենադարանի № 32 ձեռագիր տեքստերի մի մասի և հիշատակարանի հետ[2]։ Ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակված է 1794 թ. Բանակլայում։ Ընդօրինակող գրիչն է Պետրոս դպիրը։ Ուսումնասիրությունից պարզվեց, որ այս ձեռագիրը ժամանակին պատկանել է Մկրյանին։ Նախապես մեզ հետաքրքրում էին միայն Ստեփաննոս Դաշտեցու բանաստեղծությունները. ծանոթ չլինելով ոչ ձեռագրին և ոչ էլ ձեռագրում պահվող Նաղաշ Հովնաթանի տաղերին, խնդրել էինք նկարահանել միայն Դաշտեցու բանաստեղծությունները։ Ահա այդ լուսանկարների հետ լուսանկարվել և մեզ է ուղարկվել նաև Դաշտեցու տաղերին նախորդող մի քանի թերթերը, որոնք պարունակում են Հովնաթանի երկու բանաստեղծությունները։ Դրանցից առաջինը «Վասն Վարդան ժամհարին, որ վասն իւր քնատ լինելոյն, եկեղեցւոյ որձակն սպանեց, ասելով թե. «Ինչ բան ունես հետ օտար հաւերի» ստեղծագործությունն է, որը հրատարակվել է նախ «Լումա»-ում, ապա Ա. Մնացականյանի և Շ. Նապարյանի կազմած Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուում, իսկ երկրորդը՝ մինչև այժմ անհայտ մնացած մի ողբ է. «Ողբերգութիւն յաղագս մահուան Մանդասի Շահպազին Արզրումցւոյ, զոր ի Թաւրէզ քաղաքի հանգեաւ ի Քրիստոս 1161 թուոջ» (էջ 216—218) խորագրով։

Երբ Հովնաթան Նաղաշի այս ողբը համեմատեցինք Հակոբ Հովնաթանի «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ, զոր ի ՌՃՀԱ թուոջ ամսեանն հոկտեմբերի ԻԸ առ տէր փոխեցաւ

---

[1] «Լումա», 1899, գիրք Ա, 276—282։

[2] Լուսանկարներն այս տարի Լիբանանից բերել է պրոֆ. Ա. Աբրահամյանը։ Նյութի ընտրման և լուսանկարման գործում մեծ օգնություն են ցույց տվել հայագետ Սիմոն Սիմոնյանը և Հայր Շահե Ահիմյանը, օգտվելով առիթից, հայտնում ենք նրանց մեր շնորհակալությունը։



Ն. Հովնաթանի բանաստեղծությունը

ի իւրում գաւառի, ասացեալ որդւոյն իւրոյ Յակոբայ» բանաստեղծության հետ, պարզվեց, որ Հակոբը իր այս ողբը գրելու ժամանակ մեծապես օգտվել է հոր գրած ողբից, պահելով նույն հանգավորումը։ Բանը հասել է այնտեղ, որ նա նույնիսկ ամբողջական տներով կրկնել է հորը։

Օրինակ՝ Ն. Հակոբի ողբի 14-րդ տունը.

Մանօթ էիր համայն մեծաց իշխանաց,
Բարի հաւատով փոխեալ ի կենաց,
Ինքն պակասեալ, անունն մնաց,
Այր երևելի Նաղաշ Հովնաթան։

Եվ Ն. Հովնաթանի ողբի 10-րդ տունը[1]

Մանօթ էր համայն մեծաց իշխանաց.
Բարի հաւատով փոխեալ ի կենաց.
Ինքն պակասեալ, անունն մնաց.
Այր երևելի Մահդասի Շահպազ։

Ինչպես տեսնում ենք, այս տնում որդին կրկնել է հորը՝ միայն Մահտեսի Շահպազ անունը փոխել է Նաղաշ Հովնաթան անունով։ Նույն ձևով Ն. Հակոբը Ն. Հովնաթանի ողբից իր ողբի մեջ է մտցրել 18 և 19-րդ տները։

Ահա նմանության մի այլ օրինակ.

Ն. Հակոբի 13-րդ տունը.

[1] Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, կազմեցին Ա. Մնացականյանը և Շ. Նազարյանը, 1951, Երևան, էջ 215։

Կարօտ մնացինք շնորհացդ և բանիդ։
Ես և Յարութիւն փոքրիկ պատանիդ,
Մենք միշտ լալով զամբ վերայ տապանիդ,
Ասեմք «Ո՞ւր ես, հայր, վարպետ Յոփնաթան»։

Ն. Հոփնաթանի ոդրի 2-րդ տունը.

Վասն որոյ նստիմք մեք ի սուգ խորին.
Ես և Սարգիսն, եզբոր որդի նորին.
Երթամք տեսանենք զերեզման սորին.
Լալով ասեմք ուր ես Մահդասի Շահպազ։

Նման օրինակները շատ են։

Հրատարակության հանձնելով մինչև այժմ անհայտ Նաղաշի այս տաղը, նրա վրա ենք հրավիրում բանասերների ուշադրությունը։

216. ‖ Ողբերգութիւն յաղագս մահուան Մահդասի Շահպազին Արզրումեցւոյ, զոր ի Թարվէզ քաղաքի հանգեաւ ի Քրիստոս 1161 թուոջ։

Եկայք զիս լացէք աղդ արամազին.
Մեղք իմ ծանրացան նման զաւազին.
Զի այսօր լուաւ ականջ Այվազին.
Ըզմահ Մահդասի պարոն Շահպազին։

* * *

Ծանօթ էր համայն մեծաց իշխանաց.
Բարի հաւատով փոխեալ ի կենաց.
218. ‖ Ինքն պակասեալ անունն մընաց.
Այր երևելի Մահդասի Շահպազ։

* * *

Զքեզ ով տեսեալ է, նա զարմացեալ է.
Եւ անունըդ քո երկիրս լցեալ է.
Բայց տես թէ քանի անչափ լացեալ է.
Զքո մահ լսօղն Մահդասի Շահպազ։

* * *

Այսօր քո բարեկամքն ամէն սուգ առին
Որպէս գունդք ոչխարաց խուռնեալ ընդ գառին,
Կարօտ մընացիր քո գեղ՝ գաւառին.
Իմ զարիպուկ հայր Մահդասի Շահպազ։

* * *

Ո՞րպէս անցուցէ տարին ամիսն.
Վատարոխիտ ծառայ խղճուկ Սարգիսըն.
Աղուոսուեմ որպէս գարնան մայիսն.
Ողբալով ըզքեզ Մահդասի Շահպազ։

* * *

Մինչև ե՞րբ այսպէս որբացեալ մնամք.
Զքեզ ո՞րպէս թողեմք լալով հեռանամք

Այլ չեմք գըրելոյ ողջունի գրեանք.
Թէ հայը պարծանաց Մահդասի Շահպազ։

* * *

Ռազումք ցանկային քոյին անուանն.
Թէ ժողովուրդքն՝ թէ ըէգիրդեանն.
Անտէրունչ մնաց օթաղ այվանն.
219. ‖Ո՞ւմ թողեմ կնամ Մահդասի Շահպազ։

* * *

Մեծ հաւատարիմ եղեր անուանի.
Հմուտ և գիտող ամենայն բանի.
Կարօտ կու մնամք քոյին տապանի.
Երբ քեզնէ զատվիմ Մահդասի Շահպազ։

* * *

Հարազատ հօրէդ զատեալ հեռացաք.
Բարի խրատուց քոց մեկնեալ զրկեցաք.
Թէպէտ շատ լացաք՝ ոչինչ շահեցաք.
Դարձեալ առ աստուած ապաւինեցաք։

* * *

Վասն որոյ նստիմք մեք ի սուգ խորին.
Ես և Սարգիսն եղբօր որդի նորին.
Երթամք տեսանեմք զերեզման սորին.
Լալով ասեմք՝ Ո՞ւր ես Մահդասի Շահպազ։

* * *

Յարգրումցի էր Շահպազ Մահդասին.
Նստէր ի Թարվէզ որ շահաստան ասին.
Ռու արժան լիցիս արդարոց մասին.
Քրիստոսասէր հայր Մահդասի Շահպազ։

* * *

Նա էր արուեստիւ մեծ վաճառական.
Անուամբ և գործով բանիւ պատուական.
Իազմաց ցանկալի և յոյժ սիրական.
Ամէն քեզ կարօտ Մահդեսի Շահպազ։

* * *

Գիտէր շատ բանից նա որպիսութիւն.
218. ‖Ի յառ և տըրոց իրաց ընտրութիւն.
Ըստացեալ ունէր մեծ իմաստութիւն.
Խոհեմ, հանճարեղ Մահդասի Շահպազ։

* * *

Գնացիր սիրով սրտիւ լիակոն.
Սուրբ Երուսաղէմ քաղաք պատուական.
Ցուսով համբուրել քրիստոսի տապան.
Վասն այն կոչեցար Մահդասի Շահպազ։

* * *

Գործովքդ բարի խօսիւք քաղցրահամ.
Ողորմած, հիւրասէր որպէս Աբրահամ.
Մրպէս քեզ իշխեմ, կամ անուանդ տամ,
Երբ ի հող դարձար Մահդասի Շահպազ։

* * *

Ր վաճառանոցն ամէն օր գնայիր.
Մանօթ սիրելեաց դու բարև տայիր.
Ամէն մարդոյ բան փութով հոգայիր.
Զեռնտու օգնական Մահդասի Շահպազ։

* * *

Նստէր ի սեղան բարեօք դանազան.
Կոչէր քահանայք եղբարք սրբազան.
Զ'եղեր ալևոր, չ'առեր գաւազան.
Կիսկատար գնացիր Մահդեսի Շահպազ։

* * *

Հաստատուն էիր զղջմամբ մեզայի.
Զմահ քո յիշելով անձամբ դողայի.
Զքեզ առնեմք արժան մէկ հայր մեղայի.
Տէր քեզ ողորմեսցի Մահդասի Շահպազ։

* * *

Այժմ մեք լալով երթամք հեռանամք.
Ով աստուածասէր և սուրբ քահանայք.
Օրհնել զերեզմանն դուք մի՛ մոռանայք.
Ղարիպ Մահդասի պարոն Շահպազին։

* * *

Շարադրող բանի նաղաշ Յոփնաթան.
Առ քեզ առաքեմ ողջոյն սրբութեան.
Սուրբ Հոգին սիրտ ձեր տխուր տրտմակա՝ն
Մխիթարեսցէ սիրովն անվախճան։